ԱԼԻՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ALINA MARTIROSYAN

ԻՄԱՑԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մոտիվացիոն ոլորտը անձի միջուկն է, հետևաբար մոտիվացիոն ոլորտի ձևավորումն էական ազդեցություն է ունենում անձի հետագա զարգացման վրա: Մարդու զարգացման հոգեբանության ուսումնասիրումն անհնար է առանց վերջինիս մոտիվացիոն ոլորտի ուսումնասիրման: Մոտիվացիոն ոլորտը ունի բավական բարդ և բազմաշերտ կառուցվածք: Այն իրենից ներկայացնում է ոչ միայն դրդապատճառների և պահանջմունքների, այլև մարդու կողմից իրականացվելիք գործունեությունների, դրանց իրականացման դրդապատճառների\նպատակների և մեթոդների, հիերարխիա: Մոտիվացիա հասկացությունը բավական լայն իմաստ է արտահայտում. ըստ էության մոտիվացիան անձի վարքը կողմնորոշող բոլոր դրդիչների՝ պահանջմունքների, դրդապատճառների, հետաքրքրությունների, մղումների համակցությունն է:[1] Այն դրդապատճառների ձևավորման դինամիկ գործընթաց է, որը սուբյեկտին մղում է պահանջմունքի բավարարման գործունեության: Չնայած գոյություն ունեցող բազմաթիվ տեսական և փորձարարական մշակումների այնուամենայնիվ մոտիվացիայի որոշ ասպեկտների վերաբերյալ համընդհանուր մոտեցում գոյություն չունի, որն էլ վկայում է վերջինիս բազմաշերտ, բարդ կառույց լինելու մասին:[2] Ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ է ստեղծագործական կարողություններով օժտված, համակողմանի զարգացած, մշտապես ինքնազարգացման ձգտող անձնավորություններ՝ ունակ հեշտությամբ կողմնորոշվելու անընդհատ փոփոխվող իրականության մեջ և պատրաստ արագորեն յուրացնել գործունեության նորանոր տեսակներ և ոլորտներ: Այս ամենի իրականացման համար անհրաժեշտ նախապայման է համապատասխան իմացական մոտիվացիայի ձևավորումը, որի զարգացման առանձնահատկություններին էլ կանդրադառնանք տվյալ հոդվածում:

---

[1] Маклаков А.,Общая психология,Санкт-Петербург,2001, стр.511

[2] Психология человека от рождения до смерти,Психологическая энциклопедия,М. 2002, под ред. А.А. Реана,стр. 128

Իմացական մոտիվացիան անձին նորը իմանալու գործունեության մղող ներքին դրդիչների համակցությունն է: Պետք է նշել, որ այսօր դեռևս բավարար չափով չեն ուսումնասիրված անձի մոտիվացիոն ոլորտի և հատկապես իմացական մոտիվացիայի զարգացման օրինաչափությունները: Այս երևույթը ուսումնասիրվել է Մ Լիսինայի, Լ. Բոժովիչի, Ա Մատյուշկինի, Ն Սլավինայի աշխատություններում, որտեղ վերջինս դիտարկվում է որպես արտաքին գործոններից անկախ, անձի ներքին և ինքնաբավ մոտիվացիա՝ ուղղված նորը բացահայտելու և այդ մտավոր գործունեությունից հաճույք ստանալու գործընթացին: Իմացական մոտիվացիան առավել ակնառու հանդես է գալիս որպես իրադրայնորեն առաջացած իմացական պահանջմունք՝ կապված որևէ մտավոր խնդրի լուծման հետ, որի ընթացքում ծագում է պրոբլեմային իրադրություն: Վերջինս պահանջում է սուբյեկտից նոր գիտելիքի ձեռք բերում և խնդրի լուծումն ապահովող համապատասխան իմացական գործունեության իրականացում:[3] Կարելի է ասել՝ իմացական պահանջմունքը առաջանում է պրոբլեմային իրադրության ընթացքում: Իմացական մոտիվացիա հասկացությունը կապված է իմացական ակտիվություն,իմացական գործունեություն, իմացական հետաքրքրություն հասկացությունների հետ: Իմացական ակտիվությունը՝ իմացական գործունեություն իրականացնելու պարատակամությունն ու նախաձեռնումն է: Իմացական ակտիվության հիմնախնդրի ուսումնասիրմամբ զբաղվող գիտնականները(Բ. Գ. Անանեվ,Տ Ա Կուլիկովա,Ա Վ Պետրովսկի,Գ Ի Շուկինա և այլոք) գտնում են, որ վերջինս հոգեկանի զարգացման կարևորագույն շարժիչ ուժ է: Այն բնութագրվում է որպես մտավոր ջանքերի գործադրման որոշակի մակարդակ՝ ուղղված իմացական հետաքրքրության բավարարմանը: Անձի իմացական հետաքրքրությունը իր հերթին իմացական պահանջմունքի հուզական արտահայտումն է: Երբ մարդու մոտ առաջանում է ցանկություն ճանաչել և բացահայտել իր համար նշանակալի առարկան կամ երևույթը: Իմացական հետաքրքրությունը բազմաշերտ է: Այն ներառում է ինտելեկտուալ, հուզական և կամային կոմպոնենտներ: Հետազոտողների զգալի մասը իմացական հետաքրքրությունը դիտարկում են որպես դրդապատճառ, ոմանք էլ որպես ուսուցման կարևորագույն մեթոդ: Ըստ Գ Շուկինայի իմացական հետա-

[3] Матюшкин А., Психологическая структура, динамика и развитие познавательной активности,Вопросы психологии,1982,4,стр.7

քրքրությունը անձի ընտրողական ուղղվածությունն է:[4] Ակնհայտ է, որ շրջապատող աշխարհի առարկաներն ու երևույթները հավասարապես չեն հետաքրքրում մարդուն: Վերջինիս ուշադրությունը գրավում է այն ինչի կարիք և պահանջ ունի նա, ինչը նրա համար կենսական նշանակություն և իմաստ է արտահայտում: Իմացական հետաքրքրության հիմքը կարելի է համարել այն հուզակամային վերաբերմունքը որով պատճառաբանվում է իմացական գործունեությունը: Վերջինս հուզական ըմբռնման, տեսական մտածողության և պրակտիկ գործունեության միասնությունն է: Այն իրագործվում է մարդու կենսական ուղու յուրաքանչյուր հատվածում և գրեթե գործունեության բոլոր տեսակներում. Իմացական գործունեությունը գրեթե միշտ կապված է որևէ առարկայի կամ խնդրի հետ և միշտ նպատակաուղղված է դեպի այդ առարկան կամ երևույթը: Այն իրականացնում է հետևյալ կարևոր գործառույթները՝ զինում է մարդուն գիտելիքներով, ունակություններով, կարողություններով: Նպաստում է աշխարհայացքի ձևավորմանը, զարգացնում է մարդու անձնային որակները, ակտիվությունը, ինքնուրույնությունը, իմացական հետաքրքրությունները, արտահայտում և իրականացնում է անձի պոտենցիալ հնարավորությունները, մղում է որոնողական և ստեղծագործական գործունեության: Անհնար է թերագնահատել իմացական գործունեության նշանակությունը անձի ձևավորման և զարգացման գործում, քանի որ վերջինիս ազդեցության տակ են ձևավորվում բոլոր իմացական գործընթացները. գիտակցությունը: Իմացական մոտիվացիայի վերաբերյալ գրականության ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ անձի զարգացման վաղ փուլերում այն հանդես է գալիս որպես արտաքին որակ, որն առաջանում է հաղորդակցման,փոխազդեցության գործընթացում: Այնուհետև զարգացման առավել բարդ մակարդակներում վերջինս վերածվում անձի ներքին և ինքնաբավ որակի: Ուստի և կարևոր է դառնում անձի զարգացման և իմացական մոտիվացիայի համահարաբերակցման առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Անձի մոտիվացիոն ոլորտի զարգացումը էապես կախված է հոգեկանի զարգացման գործընթացից: Օնտոգենեզում անձի զարգացման յուրաքանչյուր փուլում մոտիվացիոն ոլորտի զարգացումն ունի իր առանձնահատկությունները: Օրինակ մանկիկության շրջանում մարդու մոտ գերակշռում են առավելապես ֆիզիոլոգիական պահանջմունքները: Մարդու կյանքի առաջին ամիսներին դեռևս վաղ է խոսել դրդապատճառների, հետաքրքրությունների մասին: Բայց այս շրջանը էական նշանակություն ունի

---

[4] Шукина Г.И. Активизация познавательной деятельности учащихся в учебном процессе PDFУчеб. пособие. - М.: Просвещение, 1979,стр.112.

անձի մոտիվացիոն ոլորտի հետագա զարգացման համար: Հետևաբար հենց այս էտապում առավել կարևոր է դիտարկել և ուսումնասիրել առաջին սոցիալականորեն պայմանավորված պահանջմունքներ, որոնք հետագայում որոշում են անձի ակտիվության մակարդակն ու ուղղվածությունը:[5] Մարդու կյանքի առաջին 3-5 շաբաթների ընթացքում երեխայի մոտ առաջանում է հետաքրքրություն իր շուրջ կատարվածի նկատմամբ, որն արտահայտվում է տեսողական կենտրոնացվածության առաջացմամբ և համապատասխան վարքի դրսևորմամբ: Հետազոտողներն այս երևույթն անվանում են իմացական պահանջմունքի կամ նոր տպավորություններ ստանալու պահանջմունքի առաջացման սկիզբ: Նոր տպավորություններ ստանալու պահանջմունքը Լ. Բոժովիչը համարում էր այս տարիքային փուլի առաջատար դրդապատճառ, որն էլ հիմք է հետագա մյուս բոլոր սոցիալականորեն պայմանավորված պահանջմունքների զարգացման համար: Այս առաջնային պահանջմունքի զարգացումը հանգեցնում է իմացական պահանջմունքի զարգացման բնականոն գործընթացի իրականացմանը, որն էլ երեխային մղում է շրջապատող աշխարհն ավելի խորը ճանաչելու, բացահայտելու գործընթացին:[6] Ընդ որում վերոհիշյալ պահանջմունքի բավարարումը զարգացման այս փուլում մեծապես կախված է երեխային շրջապատող մեծահասակների կողմից իրականացված համապատասխան գործունեությունից: Ուստի և կարելի է եզրակացնել, որ մարդու իմացական մոտիվացիայի զարգացման կարևորագույն գործոն է հաղորդակցումը, ինչը նաև տարքային այս փուլում հանդես է գալիս որպես առաջատար գործունեություն: Մ. Ի. Լիսինան գտնում է, որ հաղորդակցումը շրջապատող մարդկանց հետ վճռական ազդեցություն է թողնում երեխայի իմացական ակտիվության ձևավորման վրա:[7] Զարգացման հետագա փուլերում, երբ տեղի է ունենում իմացական գործընթացների ինտենսիվ զարգացում, մոտիվացիոն ոլորտում ևս առաջանում են մի շարք փոփոխություններ: Արդեն նախադպրոցական տարիքում առաջանում և զարգանում են մի շարք պահանջմունքներ: Առաջանում է հետաքրքրություն տարբեր ստեղծագործական գործունեությունների նկատմամբ (երգ, երաժշտություն, նկարչություն և այլն): Իմացական մոտիվացիայի զարգացման համար այս շրջանը համարվում է չափազանց կարևոր, քանի որ հենց այս տարիքում մեծ ինտենսիվությամբ զարգանում է երեխայի հետաքրքրասիրությունը: Գիտնականներն այս տարիքն անվանում են ինչուների ժամանակաշրջան: Եթե երեխայի իմացական ոլորտի և առհասարակ հոգեկանի զարգացման կարևորագույն գործոններ են խաղը և հաղորդակցումը ինչպես մեծահասակների, այնպես էլ հասակակիցների հետ: Բազմաթիվ հետա-

---

[5] Психология человека от рождения до смерти,Психологическая энциклопедия,М. 2002, под ред. А.А. Реана,стр. 130.

[6] Божович,Л.,Личность и ее формирование в детском возрасте, М. 1968, стр. 202.

[7] Лисина, М.,Развитие познавательной активности детей в ходе общения со взрослыми и сверстниками, Вопросы психологии,1982,4,стр.33

զոտություններ վկայում են, այն մասին որ երեխայի իմացական հետաքրքրությունները չբավարարելու դեպքում կարող է խաթարվել ոչ միայն երեխայի հետագա հոգեկան և ֆիզիկական զարգացումը, այլ նաև նրա սոցիալական ադապտացիայի գործընթացը: Արդեն կրտսեր դպրոցական տարիքում կարծես երեխայի մոտիվացիոն ոլորտում աստիճանաբար տեղի է ունենում անցում ամորֆ կառուցվածքից դեպի դրդապատճառների հիերարխիկ կառուցվածք: Նկատվում է նաև երեխայի կողմից սեփական վարքի գիտակցաբար կարգավորելու ունակության ձևավորումը: Այս շրջանում երեխային կարծես հետաքրքրում է անձամբ ուսուցման գործընթացը որպես սոցիալական գործունեություն: Նրան իհարկե նաև դուր է գալիս գրել, կարդալ նկարել: Սակայն գերիշխող են սոցիալական դրդապատճառները (աշակերտ լինել, բարձր գնահատական ստանալ, ընդունված լինել հասակակիցներ կողմից և այլն): Երեխայի իմացական հետաքրքրությունների ձևավորման վրա էական ազդեցություն է ունենում անձամբ ուսուցիչը: Նրան հետաքրքրում է հատկապես ուսուցչի կողմից ստացած գիտելիքները, ինչն էլ վկայում է իմացական հետաքրքրությունների իրադրային բնույթի մասին: Արդեն ավելի բարձր դասարաններում գիտելիքների կուտակման և իմացական գործընթացների զարգացման արդյունքում տեղի է ունենում ուսուցման դրդապատճառների շերտավորում և առաջանում է նախընտրողական վերաբերմունք դասավանդվող առարկաների նկատմամբ:[8] Երեխայի իմացական ակտիվությունը կարծես դուրս է գալիս դպրոցի ծրագրի շրջանակներից: Նրանց մոտ մեծ ցանկություն է առաջանում հետազոտել շրջակա աշխարհը: Հատկապես սիրում են լինել արգելված վայրերում (ավերակներ, աղբանոցներ, նկուղները և այլն): Արդեն դեռահասության շրջանում անձի մոտիվացիոն ոլորտի կառուցվածքում տեղի են ունենում արմատական փոփոխություններ: Առաջանում են մի շարք բոլորովին նոր հետաքրքրություններ և նախկին հետաքրքրությունները կարծես կորցնում են իրենց ակտուալությունը: Դեռահասների իմացական հետաքրքրությունների դրսևորման մեջ էական տարբերություն է նկատվում: Ոմանց մոտ դրանք կրում են անորոշ, փոփոխական, և իրադրային բնույթ, մյուսներն էլ հետաքրքրություն են ցուցաբերում միայն դպրոցի որոշակի առարկաների նկատմամբ: Հետազոտությունները վկայում են, որ բարձր դասարանի աշակերտների ուսումնա-իմացական մոտիվացիան առավելապես կապված է մասնագիտական կողմնորոշման և ապագայի պլանների հետ: Իմացական պահանջմունքները դրդապատառների համակարգում զբաղեցնում են ավելի ցածր կարգավիճակ: Գերիշխում են հաղորդակցման (հատկապես հասակակիցների հետ), ինքնուրույն լինելու և ընդունված լինելու պահանջմունքները: Մարդու կենսական ուղու հաջորդ փուլը հասունության շրջանն է: Հետազոտողները հասունության մեջ ներառում են և անձնային և ինտելեկտուալ և թե

[8] Ильин Е.Мотивация и мотивы, С.Пб. 2000, гл. 9.4

սոցիալ հոգեբանական հասունություն հասկացությունները: Հասուն անձնավորությունը բնութագրվում է արտահայտված իմացական մոտիվացիայով, որի հիման վրա ձևավորվում են բարձրագույն հոգեկան գործառույթները կոնցեպցիայի հստակությամբ, որոնք էլ նպաստում են ինքնազարգացման, ինքնակարգավորման ձևավորմանը, որն էլ բերում է անձի ինքնահիրականացմանը: Հասուն անձնավորության իմացական գործունեությունը կապված է վերջինիս մասնագիտական գործունեության, աշխատանքային ոլորտում հաջողությունների հասնելու հետ: Ակնհայտ է, որ գիտական ոլորտում աշխատող անձիք մշտապես գտնվում են իմացական, ճանաչողական գործունեության մեջ: Վերջիններիս համար իմացական գործունեությունը նրանց մասնագիտությունն է: Սակայն իմացական հետաքրքրությունները կապված են ոչ միայն մասնագիտական գործունեության հետ: Շատ հաճախ դիտվում է անձի զարգացման կարևոր նախապայման և կախված է մարդու հետաքրքրություններից: Հասուն տարիքում զարգացումը իրականանում է այլ օրենքներով: Հասուն անձնավորությունը ինքնազարգացող համակարգ է: Զարգացման այս փուլում անձի ակտիվությունը պետք ուղղված լինի սեփական եսի կառուցման, ներքին էության ճանաչման և կատարելագործման գործունեությանը: Հոգեբանների որոշ մասը իմացական գործունեություն են համարում կյանքի իմաստի որոնումը: Այսպիսով պարզ է դառնում, որ իմացական մոտիվացիան անձի զարգացման տարբեր փուլերում ունի իր առանձնահատկությունները և վերջինիս զարգացումն էապես կախված է հաղորդակցման գործընթացի և անձի ակտիվության հետ: Ակնհայտ է, որ իմացական մոտիվացիայի զարգացումը փոխկապակցված է իմացական և հուզականային ոլորտների զարգացման հետ մեկի զարգացումը անշուշտ պայմանավորված է մյուսով: Այսօր կարևոր է դառնում իմացական մոտիվացիայի զարգացման հիմնախնդրի ուսումնասիրումը, քանի որ անձի զարգացման և բարձր ինտելեկտուալ կարողությունների ձևավորման լավագույն գրավականը իմացական հետաքրքրության առկայությունն է, որն արտահայտվում է համապատասխան իմացական ակտիվությամբ և նոր գիտելիքներ ձեռք բերելու համար յուրաքանչյուր հնարավորություն օգտագործելու ձգտմամբ: Ուստի և պահանջվում է մանրամասն ուսումնասիրել իմացական մոտիվացիայի զարգացման օրինաչափությունները՝ զարգացման ներքին և արտաքին գործոնների համահարաբերակցությունը, որն էլ կօգնի մշակել արդյունավետ մեթոդներ և ստեղծել օպտիմալ պայմաններ իմացական մոտիվացիայի զարգացման համար:

THE FEATURES OF DEVELOPMENT OF THE COGNITIVE MOTIVATION

The article deals with the features of development of the cognitive motivation in different stages of a person's growth. There is marked that the important factors for the progress of individual are communication and all types of human activities. Besides of this the close liaison between the cognitive interests, cognitive needs and cognitive activity is presented.